


ՏԵԽՈՄԻՐՈՎ.

**ԻՆՉՊԵՍ ԱՆԵԼ,**  
ՎՈՐ ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾԵՐԵԼԱՎԱՆԱՆ



ՏԵԽՈՄԻՐՈՎԻ ԱՅՍ ԳԻՐՔԸ  
ԴԵԿԱԿԱՐ ԿԱՐՈՅ Ե ԼԻՆԵԼ ԲՈԼՈՐ  
ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ԽՄԱՄԱՆԵՐ ՅԱՄԱ

ԴՐԱՄԱԿԱՆ ՎՐԱՅԻ «ԴԱՅԱՐՈՎ» - 1  
1924-ՅԵՐԵՎԱՆ.



23/15

1692

306

№ 1

ԿՈՂՄԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

ՄԻԱԽԹՅԱՆԻՆ  
ՈՒՅԹ Ե

Պրոլետարյան բողոք յիսկընկերի, միացե՛ք


334.5

334.5

## ՏԵԽՈՄԵՐՈՎ


ԻՆՉՈՒՄ ԱՆԵԼ, ՎՈՐ ԿՈՂՄԵՐԱՏԻՎԻ  
ԳՈՐԾԵՐԸ ԼԱՎԱՆԱՆ

ԹԱՐԳԱ. Գ. ՆԱԶԱՐՅԱՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

1924 ՏԵՐԵՎԱՐԱ





306-Ch 92



ՏՐԵՅՄԻ ԱՐԱՐԻ ՏՊԱՄԱՆ

Գրասեն. 1560

Գատով. 669

Տել. 2500

## ՅԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Տիկոսմիրովի բրոցյուրի թարգմանությունը մենք  
արել յենք ազատ, շատ դեպքերում թույլ յենք տվել  
կրծատումներ ու հավելումներ՝ զրքույկի ընդհանուր վո-  
դին հարմարեցնելով Հայոստանի իրականությանը:

Թարգմանիչ



## I ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՂԴԵՐԱՑԻՎԸ

Մեր կոռպերատիվ աշխատանքներն որեցոր զարգանում ու մեծանում են, սպառողական ընկերությունների թիվը ամսեամիս ավելի ու ավելի շատանում է, Սակայն դժվարը սպառողական խանութ բանալը չե. ավելի զժվար և նրա գործերը կարգին հիմքերի վրա դնելը, իսկ այդ անել կարելի յե միայն ընդհանուր ուժերով: Հաջողություն կլինի միայն այն ժամանակ, յերբ բոլորը կրմանան, թե իրենք ինչի յեն ձգտում և ինչպիս են մտածում իրենց կոռպերատիվի գործերը դնել: Հենց զրտ համար, ամենից առաջ պիտք և իմանալ, թե ինչի համար և կազմակերպվում սպառողական ընկերությունը:

Սպառողական ընկերությունն ազգաբնակությանը հարկավոր ե՝ նրան սպառելու մթերքներ և անային գործածության առարկաներ հայթայթելու համար, կամ ինչպիս առում են, իր անդամների սպառողական ու տնտեսական բոլոր կարիքներին ծառայելու համար: Տնտեսական կարիքներին են վերաբերվում կոռպերատիվի անդամներին փողով վարկ բաց թողնելը, գյուղատնտեսական գործիքների մատակարարումը (կանխիկ վճարով կամ մաս-մաս վճարելու պայմանով) և այլն: Այս և սպառողական ընկերության գլխավոր նպատակը:

Բացի այդ՝ սպառողական կոռպերատիվը կազմակերպում է իր անդամների արտադրած հում նյութերի և մթերքների վաճառաքը և վերամշակման գործը: Որինակի համար՝ յուրաքանչյուր գյուղացի կարող է իր կոռպերատիվին հանձնարարել, վոր նա վաճառի իր անտեսության ավելցուկ ցորենը, չալթուկը, բամբակը և այլն: Հարկավոր չե, վոր նա ինքը գնա շուկա, իզուր ժամանակ կորցնի, մանավանդ վոր՝ մինակ վաճառելը միշտ ել ավելի պակաս հաջողություն և ունենում: Հենց նրա կոռպերատիվը իր միության միջոցով միշտ կարող է ավելի ձեռնուուշուկա (բաղար) գանել և գյուղացու ապրանքն ավելի բարձր գնով ծախել:

Շատ շըջաններում ավելի հարմար է գյուղացու ապրանքը վերամշակման յենթարկել, որինակ ցորենն ազալ, բամբակը մաքրել, խաղողը գինի շինել և այլն: Հենց այս նպատակով սպառողական ընկերությունը կարող է, որինակ, իր ջրաղացը,

բամբակ մաքրելու գործարանը, զինեկործարանը և այլ նմանութինակ ձեռնարկություններն ունենալ: Միայն թե պիտի լավ կշռել, քննել, թե այդպիսի գործը ձեռնատմէ յէ կոռպերատիվի համար, վասա չի բերի նրան և այն կազմակերպելու համար հարկավոր միջոցներն ու նյութերը բավականություն կանեն արդյոք:

Յուր անդամներից, այլ և կողմանակությունից ցորեն, բամբակ, խաղող, կաթ, յուղ և ամեն տեսակ ուրիշ հումք ընդունելու համար՝ կոռպերատիվը կարող ե բաց անել իր պահեստներն, ամբարները, խանութները: Այստեղ գյուղացու բերած բոլոր ապրանքներն ընդունվում են և դրա փոխարեն նրան արգում են գյուղացուն անհրաժեշտ ապրանքները:

Գյուղացուն հարկավոր են մեքենաներ և նրա անտեսության անհրաժեշտ այլ նյութեր: Կոռպերատիվը պետք ե ձեռքբերի այդ ամենը և իր անդամների նմանորինակ կարիքներին բավարարություն պիտի տա:

Սպառողական ընկերությունը չի կարող միշտ ել գյուղացուն ամբողջովին և միանգամից վճարել նրանից ընդունած ցորենի, բամբակի, խաղողի և այլ արդյունքների գինը: Այդպիսի գեղքերում կոռպերատիվներն այլ կերպ են վարդում, իրենց անդամների հանձնարարությամբ նրանք կազմակերպում են կոմիսիոն գործողությունները: Ի՞նչ և նշանակում կոմիսիոն գործողություններ: Այս նշանակում և, վոր, որինակ, Մարկոսը կամ երակոսը ծախելու ցորեն, բամբակ կամ այլ արդյունք ունեն իրենց անտեսության մեջ: Այդ ամենը բերում են իրենց սպառողական խանութը, հանձնում ու ստացական են առնում: Միաժամանակ նրանք կոռպերատիվի վարչությանը հանձնարարում են այդ ապրանքը ծախել ամենաձեռնատու գնով. վարչությունն այդ հանձնարարությունը կատարում ե, ապրանք ծախում ու ստացած փողը տալիս գյուղացուն՝ նրա ստացականի հիման վրա:

Այս գործը մեծ գործ ե: Այժմ, և մանավանդ առաջներում, գյուղացիությունը կոռպերատիվին շատ ապրանքներ եր տալիս վաճառքի հանելու համար: Կոռպերատիվը, այդպիսով, առանց կողմանակի միջոցների՝ շատ մեծ գործեր եր անում, և գյուղացու գրպանումն եյին մնում այդ կոմիսիոն գործողություններից ստացած ողուոները:

Այդ նույն աշխատանքից կոռպերատիվը իր սեփական կապիտալն ել և մի քիչ մեծացնում: Կոպեկներից ուուրիներ են կազմվում և վերջն այդ կապիտալից կոռպերատիվի ամենակա-

քիքավոր անդամնմըին փողով պարտք եր տրվում։ Յեթե այս պիողերին ավելացնենք նաև այն վարկը, վոր կարող ե կոռակերատիվների միությունը բաց թողնել կոռակերատիվին, առաջ աշխատանքը բոլորովին կհեշտանա և կոռակերատիվ գործերը շատ լավ առաջ կերպան։

Սպառողական ընկերությունն ելի շատ բան կարող ե անել։ Նա կարող ե բանալ կոռակերատիվ թեյատներ և ճաշարաններ։ Բայց միայն տնտեսական գործերով չե, վոր զբաղվելու յե սպառողական ընկերությունը կյանքն առաջ ե վազում։ Գյուղացին հիմա առաջվագյուղացին չե, վոր զբսի աշխարհից վնչ մի տեղեկություն չուներ և չեր ուզում ունենալ։ Թե բանվորը, թե գյուղացին այժմ ուզում են զիտենալ, թե արար—աշխարհում թնչ ե կատարվում, և գիտենալ վոչ միայն հատաքրքրության համար, այլ վոր իրենց տնտեսությունը կարգի դնեն և իրենց կյանքի պայմանները լավացնեն։ Այս գործում ել կոռակերատիվները կարող են բաց անել զբաղարաններ, ընթերցարաններ, կազմակերպում են դասախոսություններ։ Այս միջոցով գյուղացին ավելի յե լուսավորվում և նա ձգտում ե ավելի կարգավորել ու բարձրացնել իր տնտեսությունը կոռակերատիվ հիմունքներով։

Ահա թե ինչ նպատակների համար ե կազմակերպվում սպառողական ընկերությունը։ Մենք կարծ խոսքերով ծանոթացանք այդ նպատակների հետ։ Ավելի մանրամասն այս մասին կանոնադրության մեջ ե խոսված։

Ընկերության կանոնադրությունն ինչպես առաջներում կոռակերատուրներն եյին առում— «մի ճանապարհ ե, վորից վոչ մի, վոչ մյուս կողմը չի կարելի ծովել»։ Կանոնադրությունը կարելի յե ձեռք բերել ամեն մի կոռակերատիվ միության մեջ կամ նրա բաժմանմունքում։ Կանոնադրության մեջ մանրամասն ցույց ե տրված, թե ումից ե կազմվում սպառողական ընկերությունը, թե ինչ իրավունքներ ու պարտականություններ ունեն նա և նրա անդամները, թե ինչ միջոցներով և նա աշխատում, ինչպես և նա զեկալիարվում։ Կանոնադրության մեջ նույնապես չի մոռացված, թե ինչպես ե ընտրվում վարչությունը, վերաստուգիչ (քննիչ) հանձնաժողովը, ինչ իրավունքներ ունի քննիչանուր ժողովը և ինչպես են տարվում կոռակերատիվի հաշիվ-նիրը։

## II. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ- ԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ պետք է կազմվակերպվի մարզկանց մի փոքրիկ խմբակ, զոր թե ավելի հեռատես են և թե ավելի լավ են հասկանում հասարակության շահերը: Նրանք պիտաք ե քննեն, թե վորտեղ բաց անեն կոսովերատիվ խանութը, վորտեղ վարչությունը, վորոշեն, թե կոսովերացիան ի՞նչ շրջանում ե իր գործերը տանելու: Սպառողական ընկերությունները լինում են միախանութ և բազմախանութ: Միախանութ այն ընկերություններն են, վորոշ ունեն մեկ խանութ և գործում են մի զյուղում կամ մի գործարանում: Բազմախանութ ընկերությունները ծառայում են մի քանի զյուղերի կամ մի քանի գործարանների կարիքներին: Այստեղ, վորտեղ վարչությունն ե գտնվում, պետք է համարել զիստվոր խանութը կամ պահեստը, իսկ մնացած զյուղերում և գործարաններում բաժանմունքներն են գտնվում: Խարկե, յեթե զյուղը կամ գործարանի շրջանը շատ է մեծ, մի ընկերություն կարող ե բանալ մի շարք բաժանմունքներ՝ զյուղի կամ գործարանային բանվորության բնակավայրին համեմատ:

Այսպիս ուրեմն՝ պետք է քննիլ ու վճռել, թե կոոպերատիվը  
մի զյուղի, թե մի քանի գյուղերի համար է բացվելու Հարցը  
քննելիս ի նկատի պետք է առնել ձանապարհները, անդամների  
հարցարությունը, գործի ձեռնուու լինելը և այլն, Տեղեռո՞մ այդ-  
բայցն ի հարկե ավելի պարզ է:

Ցերը այս բոլորը քննված ու վճռված են կարելի յև գյուղացիների, ընդհանուր ժողով ել հրավիրվել: Գյուղական խորհուրդը և կոմբջիջն այս դորձում պիտի ցույց տան հարկավոր ողնություն: Այդ ժողովում պիտի վրոշում կայացնել սպասողական ընկերություն հիմնելու կարեսության մասին, պետք և հատուկ լիազորներ ընտրել, վոր կոսպերատիվ միության հետ կապ հաստատեն: Այս լիազորները՝ գնալով կոսպերատիվ միություն՝ այստեղ բանակցություններ կական, խորհուրդ կանեն և հարկավոր գեպքում հրանգչիչ կհրավիրեն: Հրահանգիչը կոսպերատիվ կազմելու բոլոր որենքներն ու կարգերը պիտե: Նա կողմանի և ցույց կտա, թե ինչպես պիտի ընդհանուր ժողով հրավիրել, ինչպես պիտի վարչության անդամներ և գործը զեկավարողութիւն մարմիններ ընտրել: Նա ցույց կտա, թե ինչպես պետք է հավաքել փայտավճարներ, պետք և ինչպես գործը սկսել: Ընդհանուրը ժողովում կոսպերատիվի կանոալգորիթյան հետ ել պիտի ծանոթանալ և այն բնողունել: Այդ բոլորից հետո, ժողովի ըն-

դունած կանոնագրությունը կոռպերատիվների միության կողմից հաստատվում ու զբանցման (բեգստրացիայի) և յենթարկվում. այնուհետև կոռպերատիվը որինական և համարվում և կառող է, կանոնադրության համաձայն՝ բոլոր գործերին ձեռնարկել:

Ինչպիս տեսնում եք՝ կոռպերատիվ կազմակերպելու գործը մի դժվար գործ չեւ: Դիմավորը-հարկավոր եցանկություն ունենալ և հավատալ վոր ընդհանուր ուժերով տնտեսությունն ավելի շուրջ կարելի յեւ բարձրացնել: Ի հարկեւ յերկար տարիների ավերումներից ու կոփվերից հետո անտեսություն բարձրացնելը հեշտ բան չեւ, բայց բարձրացնել կարելի յեւ: Ուրիշ յերկրներում, մեղ մոտ Հայաստանումն եւ, սպառողական ընկերությունները գյուղացուն տվել են տասնյակ միլիոնի ապրանքները: Յեվ այնաեղ, վարտեղ այդ ընկերություններն աշխատում են կանոնավոր ու լավ, վորտեղ ժողովուրդը յուր կոռպերատիվին ոգնում եւ, այնաեղ կյանքն ավելի լավանում ու հեշտանում եւ:

Նոր ընկերություն կազմակերպելուն՝ այլ և գոյություն ունեցող կոռպերատարիվներն ամեն կերպ պիտք և աշխատեն ընկերության անդամագրել կոռպերատիվի շրջանում ապրող ամբողջ աղյաբնակությունն: Ընկ. Լենինն իր կենդանության ժամանակ կոչ եր անում, վոր բոլոր ազգաբնակությունը կոռպերացիային անդամագրին: Նա մեղ սովորացրել և կոռպերացիայի աշխատանքն այնպես տանել, վոր այն հասկանալի լինի ամենահասրակ գյուղացուն, վոր ամեն մի գյուղացի ու բանվոր կարողանա նրա կազմակերպմանը մասնակից լինել և վոր այդ մասնակցությունը պարզ ու հեշտ լինի: Նա ասում եր. «քանի վոր մեղ մոտ պետական իշխանությունը գտնվում է բանվոր դաստկարգի ձեռքին, քանի այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեղ մոտ, իրավ վոր, մոտում ե ազգաբնակության կոռպերացման խնդիրը: Յեվ յեթե ազգաբնակության ամենաշատ մասը կոռպերացման յենթարկի ինքն իրան, ապա կիրականանա ու իր նպատակին կը հասնի այն սոցիալիզմը, վորն առաջներում որինակ ծաղրանքի ժպիտ և արհամարական վիրարեժմունքի յեր արժանանում...» Մեր սիրելի առաջնորդի այս խոսքերը մենք պետք ե շատ լավ հիշենք: Երանք իզուր չեն ասված: Կոռպերացիայի մեջ միանալ, նշանակում է ոգուտներ եւ տալ իրեն և ուրիշներին: Հենց գեպի այդ միությունը պիտի կանչել ամեն մեկին ու բոլորին: Մենք Ռուսաստանում ունենք յոթ միլիոն կոռպերացված ազգաբնակություն: Նոր-նոր անդամագրվողների թիվը որեցոր շարունակում ե մեծանալ: Բայց և այնպիս

այդ թիվը շատ փոքր թիվ ե, պիտի շատացնել այդ թիվը Սպառողական ընկերություն կազմակերպելու համար հարկավոր ե տանվազը 50 հոգի: Մեր կոռպերատիվների անդամների թիվը սովորաբար ավելի բարձր ե: Պիտի այնպիս անել, վոր կոռպերատիվին անդամագրվի ամբողջ ազգաբնակությունը կամ համենայն դեպս, ամեն մի տնտեսությունից կամ բանվորական ընտանիքից մի հոգի: Միայն այն գեաքում, յեթե բոլորը կոռպերացիայի մեջ կլինեն, կարելի յե ասել, վոր գործն ամուր վոտքերի վրա կկանգնի: Կոռպերացիայի ոգուած հասկացող ամեն մի մարդ պետք ե այդ մասին խոսի յուրաքանչյուրի հետ և առաջին հերթին իր հարեանի հետ: Հարեանն ել կը խոսի մի յերլորդի հետ և այսպես կոռպերացիայի մասին վոքհասողություն կունենա: Յեվ այսպես պետք ե անդադար շարունակել: Ասելուց խոսելուց չպետք ե վախենալ, չպետք ե քաշվել: Ամեն գործ գժվարությամբ ե սկսվում, բայց տեսնում ես վերջը կարգի ընկապի Գյուղի համբաներն ու գուրքանչիները կոռպերատիվի գեմ իսկույն արշավանք են սկսելու: Սպառողական խանութը նրանց ձեռնուու չե, այդ ամեն մեկդ լավ եք հասկանում: Այս վերջին տարին նրանք մի քիչ յետ են յեկել, ուժեղացել են: Ասելուրից կարողացել են ելի մի քանի կոպեկ հետզցել և հարստացել են: Տունն ել են նորոգել, մի նոր զույգ լծկան ել գնել: Մի քանիսն ել աննկատելի կերպով սերմացու կամ փող և ավել՝ մինչեւ նոր հունձը: Մի խոսքով, կարծեաթե հին շղթաներով ուզում են գյուղը կապկողել: Ի հարկե, խանութպանին ձեռնուու չե սպառողական խանութը: այդ նշանակում ե դյուղացուն շղթաներից ազատել: Հենց այդ ե պատճառը, վոր խանութպանը կոռպերատիվի գեմ ուժեղ քարոզ ե տալիս, այս ու այն անկյունում խոսք ու զրույց ե անում: Քանի այդ այդպես ե, քանի բանը զբան և հասնում, պիտի խնդիրը պարզ գնել և գյուղացիներին ճշմարտությունը ուղարկել: Հարկավոր ե ընդհանուր ժողով հրավիրել և կոռպերացիայի գործերը հասարակության քննությանը դնել: Միացած ուժերով այդ բոլոր զրույցներն ու բաժբասանքներն ի հարկե կջրվեն... Զարլեզուներն այլևս խոսք ու զրույցից ձեռք կը քաշեն:

Կոռպերատիվի անդամների ժողովները պետք ե ընդհանրապես հաճախ հավաքել: Ժողովներում մեկ-մեկու հասկանալը և ամեն մի թյուրիմացություն պարզեն ավելի յե հեշտ: Ավելի լավ է յերս-յերսի իրար քննադատել, իրար հայնոյել վերջում իրար կը հասկանանք և մի կոռպերատիվ ընտանիք կը դառնանք: Քաշվել, տանը նստել, ասել թե, ի՞նչ իմ զործս ե կոռպերա-

տիվը, չարանալ՝ չիմանալով թե ում վրա—այս բոլորը վոչ մի կոռպեկ չարժի, Ամեն ինչ ժողովում պետք և ասել: Բացի այս— շատ լավ կլինի, յեթե վարչության ժողովները դոնքաց լինեն և այնուղի հրավիրվեն կոռպերատիվի ավելի խելքը զլխին անդառները: Ընդհանուր խորհուրդով ամեն ինչ ավելի լավ կարելի յե անել և, բացի այդ, ընդհանուր գործին ավելի շատ անդամներ կէջմնեն:

Կոռպերատիվի նոր անդամներ գրավելու համար շատ լավ եւ, յեթե ընդհանուր ժողովներ, գյուղական հավաքույթներ շուտաշուտ կազմակերպվեն: Շուտաշուտ զեկուցումներ արվեն կոռպերատիվի գործունեյության և կոռպերացիայի մասին—սրանից գործին շատ ոգուտ կդա: Ավելի լավ և, յեթե այդ ժողովներին ու հավաքույթներին հրավիրեն խօսելու կոռպերատիվ միության հրահանգչին կամ մի այլ յեկվոր մարդու: Գյուղացին յուրաքանչերին ավելի քիչ և հավատում, բան յեկվոր մարդկանց: Այդպիսի ժողովներում պետք և կոռպերատիվի անդամազրություն բանալ:

Շատ տեղերում կոռպերացիայի գարգացման համար կոռպերատիվներին կից ստեղծվում են հասկացող ու բանիմաց մարդկանցից հանձնաժողովներ, վորոնց նպատակն և աջակցել կոռպերատիվի զարգացման գործին: Այդ հանձնաժողովները վարչությանը միծ ոգուտ են տալիս և պարզաբանում ու բացարում են կոռպերացիայի նպատակը, զրույցներ ու դասախոսություններ են սարքում: Հանձնաժողովի ամեն մի անդամն իր վրա յե առնում վորոշ շրջան՝ մի 50-100 տուն: Այդ շրջանում նա գործում է, կոռպերացիայի մասին զրույցներ և անում, անդամներ և ընդունում, վարչության անելիքների հետ և ծանութացնում:

Կոռպերատիվ թերթեր ու լրագիրներ ստանալն ել շատ ոգուտիար եւ վարչության կամ կոռպերատիվի անդամներից մեկը բարձր ձայնով կարդում ե այդ թերթերը բոլորի համար, վարից հետո մտքերի փախանակություն և սկսվում, ծանոթանում են կոռպերացիայի ուրիշ տեղերում արած աշխատանքներին, քննում են, թե նման նոր գործերով տեսի կոռպերատիվը կարող է զրադիվ և այլն:

Անա այս կերպ կոռպերատիվի անդամների թիվը քանի գնում, շատանում եւ Ընկերության ընդհանուր անդամազրությունը կամ ինչպես ասում են՝ ընդհանուր կոռպերացումը. դա մեր հիմնական ու անհետաձգելի անելիքն և թե գյուղում, թե քաղաքում: Շատ անդամներ ունենալ, դա նշանակում է հաջողությամբ տանել կոռպերացիայի ընդհանուր շինարարությունը:

### III. ԱՅԵՆ ՎՈՐ ՊԻՑ ՀԵՎԱՏՄԻՄ ԼԻՆԻ ԻՐ ԿՈՌՊԵ- ՐԱՏԻՎԻՆ ՅԵՎ ԾԱՑԱՑԻ ՆՐԱ ԿԱՊԻՏԱԼԸ

Սպառողական ընկերության հաջողությունը կախում ունի՝ նաև յուր անդամների հավատարիմ լինելուց: Զորքերի հրամանատարը միշտ թույլ է, յեթե նրա զորքերի մեջ միաբանություն չկա: Այդպիսի զորքը վոչ մի հաղթություն չի կարող տանել թշնամու դեմ: Այդպիս և նաև կոռպերատիվի գործը: Ամեն ինչ կախված է նրա անդամների միությունից և նրանց կոռպերատիվի հետ կապված լինելուց, իսկ այս միությունը շատ և հարկավոր, քանի մենք կովի յենք բոնվելու մասնավոր կապիտալի հետ, վոր շատ կոռպերատիվներից ավելի յեւ ուժեղ: Կոռպերատիվին հավատարիմ լինել, նշանակում է նրան միջոցներ տալ, նրանից ապրանքներ գնել և նրա միջոցով իր տնտեսության արդյունքները վաճառքի հանել:

Միջոցները առաջին հերթին պիտի կոռպերատիվին անդամոցքածներից հավաքել՝ առանց այդ միջոցների վոչ մի կոռպերատիվ չի կարող աշխատել:

Ի՞նչ ճանապարհներով են հավաքվում այդ միջոցները: Նախ մեծ առաջ Փայավետներով: Փայավճարն ամեն տեղ մինուուը չի: Այդ կախված է կոռպերատիվի անդամների դրությունից չքավոր լինելուց, գյուղացու հաջող հնձից և ուրիշ շատ պատճառներից: Յեզ նայած դրան, փայավճարը կարող է մի ուուրից մինչև հինգ ուուրլի լինել: Չպետք է շատ մեծ փայավճար վորոշել վորովհետև զրանով մենք կարող ենք կոռպերատիվի դոները փակել չքավոր գյուղացու՝ նույն իսկ միջակի առաջ: Ավելի լավ է թույլ տալ վոր ունեցողները մի քանի փայ մրցնելու իրավունք ունենան: Իսկ այդ թույլատրելի յեւ Բարձր փայավճարը յերբեմն կոռպերատիվից հեռացնում և անապահով գյուղացիներին:

Մյուս միջոցը—անդամների կողմից կոռպերատիվին ավանաներ (կանխավճար) մտցնեն և՝ ապրանքներ գնելու համար, կամ այսպես ասած—կոռպերատիվին հատուկ զումարներ տալը (փորոշ «նորմատակի» համար)—տնտեսության համար այս կամ այն առարկան, գործիքը գնելունպատակով և այլն՝ կոռողիրատիվի ընդհանուր ժողովը կամ վարչությունն իրենց վորոշմամբ բոլոր անդամներին հայտարարում են, վոր կոռպերատուիվը կանխավճարներ և ընդունում վորոշ ապրանքներ գնելու համար: Այդ կանխավճարների չափը ևս զանազան կարող է լինել՝ նայած թե տարբա վեր ժամանակին և հավաքվում, ինչի՞

համար և այլն։ Հավաքած փողով վարչությունը հարկավոր ապրանքը գնում է և բաժանում անդամների մեջ՝ համապատասխան ամեն մեկի մոցրած գումարին։

Վորոշ «Նպատակով» հավաքող գումարը համարյաթենույնն է։ Այս գեպքում միայն փող մտցնողը սկզբից ելեթ հայտնումէ, թէ իր փողով կոռապերատիվն ինչ է գնելու. — որինակ, գերանդի, գութան, կոշիկներ, շոր և այլն։

Վորպեսզի կոռապերատիվին հավատանշատ կարեր է, վոր վարչությունը հաճախակի հաշիվ տա կոռապերատիվի անդամներին հասարակական գործի զբության ու շրջանառության մասին։ Այս գեպքում միշտ հնարավոր է լինում փայտվճարներն ավելացնելու խնդիր ել դնել։

Յեթե սպառողական կոռապերատիվը միծ կապիտալ ունի, այդ նշանակում է, վոր նա ուժեղ ու առողջ է։ Այս գեպքում կարելի յե կողմանակի տեղերից ել պարտք ստանալ և կոռապերատիվի շրջանառության միջոցները կրկնապատճել. ժողովրդական սուածը զուր չի ասում, թէ փողը փող ե բերում։ Յենթագրվում է սպառողական ընկերությունների համար յերկար ժամանակով բաց թողնել հատուկ վարկ։ Այս վարկը տրվելու յե՝ կոռապերատիվին կապիտալին նայած։ Որինակ Եղմիածնի կոռապերատիվը յեթե փայտվճարային կապիտալը հասցըրել է 1000 ոուրլու և մի ուրիշն որինակ Նորագավիթ գյուղինը, միայն 100 ոուրլի յե, ի հարկե, նրանց ստացած վարկն ել տարբեր է լինելու։ Այս տեղից շատ պարզ է, վոր պիտի ամեն միշոց գործադրել, վոր կոռապերատիվի սեփական ու փայտվճարային կապիտալները մեծացնվի։

Լավ փայտվճարային կապիտալը հնարավորություն կտա նաև բանկերից և պետական հիմնարկություններից վարկ ստանալու։ Ան թէ ինչու պիտի այս հարցին ամենալուրջ ուշագրություն դարձնել։ Առանց միջոցների գործ չի կարելի անել։

#### IV ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿՈՐՊԵՐԱՏԻՎ ԽԱՆԹԻԹ ՃՄՆԵԼ

Կոռապերատիվի այն անդամը, վոր շատ խոսում է, բայց ապրանք և առում մասնավոր խանութից, վատ կոռապերատը է։ Այսպիսով չի կարելի մասնավոր կապիտալի դեմ կռվել։ Պիտի աշխատել, վոր ընտանիքում ինչ վոր հարկավոր է, զնվի կոռապերատիվից։ Ի հարկե խոսքով ու քարոզով չե, վոր մենք դրան հասնելու յենք, այլ կոռապերատիվի գործերը լավ հիմքերի վըտ դնելով։ Ի՞նչ է հարկավոր գրա համար։

Ամենից առաջ յերկու խոսք մեր խանութների սալիք ու կարգի մասին: Մենք այս բանին շատ քիչ ենք ուշք դարձնում, չնայած վոր հաճախ դրանից և կախված գործի հաջողությունը: Մենք մասնավոր խանութպանից շատ բան պիտի սովորենք, պիտի նրանից ընդունենք այն բոլորն, ինչով նաև գնորդներին զրավում ե, մատցածը գործը ցույց կտա և ամենորյա աշխատանքը կոսովորեցնի. ի հարկե, մասնավոր խանութպանից պիտի սովորել միայն այն, ինչ վոր ոգտակար և մեր գործի համար:

Խանութը ինչ տեղ բանալ: Մենք յերկու ծայրահեղությունների մեջ ենք ընկնում. կամ այսպիսի մի հեռու, հետ ըսկած անկյուն ենք ընկնում, վոր մեկ գտնելլ գմկար ե, կամ թե մի կենարոն ենք ընտրում, ուր կոռպերատիվի բանփոր ու զյուղացի անդամները հաղիկ են լինում: Թե մեկ, թե մյուս գեղքում մենք մոռանում ենք կոռպերատիվի անդամների շահերը:

Իսկ մենք հենց զրան պիտի ուշք դարձնէնք: Խանութը պիտի բանալ այնանդ, ուր տպրում ե կոռպերատիվի անդամների մեծ մասը: Եյս կանոնից մենք յերբեք չպիտի շեղվենք: Բանվորական շրջաններում խանութը ոլիտի գործարանին ու արհեստանոցին մոտիկ լինի, վոր բանփորն աշխատանքի գալիս կամ վերագանալիս կարողանու կոռպերատիվից ոգտվել: Գյուղերում խանութի տեղը պիտի հրապարակին (բազարին) մոտ լինի, կամ ավելի լավ ե հենց բազարում: Այստեղ ե զյուղի առևտորի կենտրոնը: Այստեղ կարելի յե հեշտությամբ համեմատել մասնավոր խանութի ու կոռպերատիվի ապրանքների գինը և չափել զրանով կոռպերացիայի ոգուար:

Խանութի մեծությունը պիտի համապատասխանի առևտորի մեծությանը: Միշտ կարելի յե վորոշել, թե խանութում ինչքան գնողներ են լինելու, ինչ առ ու ծախս, ինչ շրջանառություն: Այսպես պետք ե անել վոր խանութում նեղվացք չլինի և գնողներն յերկար հերթի չսպասեն: Խանութում պիտի հարձաքություն ունենալ ապրանքի մի փոքր պահեստ սոնեղծելու և տեղավորելու այն բոլոր ապրանքների տեսակները, վորոնք կոռպերատիվում ծախվում են:

Խանութը խոնավ չպիտի լինի, թե չե ապրանքները կարող են փշանալ: Ամեն մեկը գիտե, թե այս մասին ինչքան դժգություններ են լինում մեզ մոտ: Խանութը պիտի լուսավոր լինի, խանութ մտնելու, գուրս գալու դոները պիտի լայն ու ընդարձակ լինեն: Խանութի հետեւում լավ կլինի, յեթե ունինանք մի պահեստ (ամբար) ապրանքների պաշարը, արկդ-

ներ և այլ ավելնորդ բաներ պահելու համար: Ապրանքները այնպես պիտի պահել վոր մեկը մյուսից չըվնասվեն, որինակ նավթը շաքարի հետ, սապոնը ալյուրի կողքին և այլն: Չոր ու թաց առրանքները նույնպես չի կարելի կողք-կողքի դնել: Կարող են անխուսափելի վնասներ առաջ գալ:

Շատ լավ կը լինի, վոր հենց կոռպերատիվի կողքին վարչության համար հատուկ սենյակ լինի: Այդպես շատ լույս և վարչությունը զործին մոտիկ լինելու համար:

Սրտաքին տեսքով կոռպերատիվը չպիտի առանձին շքեղության ձգմի: Բանը շքեղությունը չի: Բանը հրանումն երթի կոռպերատիվում ինչ կա, մեծ ցուցանակների կարիք չկա: Ավելի լավ և ուշք դարձնել խանութի ներքին սարգ ու կարգին: Խանութի պատուհաններում պիտի ցուցագրվեն ծախվող ապրանքների տեսակները: Ամեն ինչից պետք է յերեվա, վոր այդ գործը սիրում են, նրա վրան մտածող կա: Թանգարժեք պատակներից ավելի լավ և ունենալ կոռպերացիայի մասին հրատարակված պատկերներ (պատկաններ): Ամէնքին համար նկատելի տեղում պիտի կախված լինեն ապրանքների գները: Ամսական հաշիվները, կոռպերատիվի գործների գրությունը պիտի նույնպես ցուցագրվի խանութի հաճախորդներին: Ամենապեսավորը պիտի մաքրության վրա ուշք դարձնել: Մենք շատ հաճախ ենք այս մասին մոռանում: Շատ անգամ մեր խանութները կեղտում են:

Վերջին ժամանակներս հաճախ են ցույց տալիս, վոր սպառողական խանութում բոլոր ապրանքները իրաք վրա յեն թափվում: Հաքարը նավթի կողքին, սապոնը յուղի, այլուրը կեղտուտ արկղներում կամ ջվալներում, իսկ խանութի ապրանքները բոլորին չեն յերեվում և գնողը չըգիտե ինչպես ջոկի իրեն հարկավոր ապրանքը: Այս բոլոր պակասություններին պիտի վերջ տալ:

Թործը այս կերպ դնելուց հետո պետք է ուշք դարձնել նաև այն ապրանքների ընտրության վրա, վորոնցով կոռպերատիվը առ ու ծախս և անելու: Մենք հաճախ շատ բանի հետեւից ենք ընկնում միանգամբ: Ուղում ենք, վոր մեր խանութում ամեն ինչ ծախել կարողանանք: Հետեւանքն այն և լինում, վոր մենք չենք կարողանում ամենաանհրաժեշտը ունենալ: Ընդհանուակը՝ գյուղական խանութում լինում են կոշիկի ներկ, ժապավեն կամ անուշահոտ ջրեր (դուխիներ): Այս կերպ առեվտուրաներուց վճռականորեն պիտի հրաժարվեն մանավանդ նոր կոռ-

պերատիվները: Խանութում պիտի ծախվի միայն այն տպրանքը, զոր հարկավոր և բանվորներին ու գյուղացիներին: Առաջին հերթին կոռպերատիվում պիտի լինի աղ նավթ, շաքար, ալյուր, բրինձ, յուզ, լուցկի, սատոն: Ապա նաև թեյ, պղպեղ, ոուրճ և այլն: Շուայլության տոսրկաներ բոլորովին չպիտի ծախիլ: Պիտի վերջ տալ ու փախէլ այն բոլոր խանութները, վորտեղ ֆախվում են ամեն ինչ (ունիվերսալ խանութ): Ապրանքների տեսակները պիտի սակավաթիվ լինեն: Բայց միաժամանակ ամենալավ հատկությամբ: Պիտի լավ հետեւ, թե տեղացիք ինչ ապրանքի յեն սովոր. այս մասին պետք են հայտնել կոռպերատիվի միությանը կամ պետական առևտուրի վարչությանը, վոր նրանք այդ ապրանքների պատրաստման մասին մտածեն: Այս մասը հարցերում շատ կարելու են զգուշությունը և ուշագրսությունը: Ապրանքը լավը չե կամ զնորդների ճաշակովը չե—նա ամբողջ ամբաներով խանութում ընկած ե մնալու, չե ծախվելու, իսկ որա հետեւվանքով կոռպերատիվի կապիտալը քնիլու յի, փոխանակ շվանառության մեջ լինելու:

Այդ մի քանի ապրանքների առ ու ծախսի մեջ կոռպերատիվի վարչությունը պիտի մասնագետ գառնա: Ուրիշ խոսքով ասած՝ պիտի այդ ապրանքները լավ ճանաչել ու գնել: Պիտի այնպես անեւ զոր սպառզական խանութը տեր զանա այդ շրջանի շուկային: Յեվ հենց վոր այդ ապրանքների առ ու ծախսը լավանա, հենց վոր տեսանք շրջանի բանվորն ու գյուղացին այդ ապրանքները յուր կոռպերատիվումն և սովորել գնել: Կարելի յե ապրանքների նոր-նոր տեսակներ ևս վաճառել: Այս տեղբում շտապել բոլորվին հարկավոր չե. տատիճանարար, կամաց-կամաց կարելի յե սկսել ամանեղենի առևտուր, մի քիչ հետո՝ յերկաթեղեն, (մեխ, նալ և այլն) և յերբ այս բոլորին սովորեն, հետո, միայն կը կի ավելացնել կոռպերատիվների ապրանքների տեսակները:

Շատ անգամ մեր կոռպերատիվներին մեծ քանակությամբ և շատ ձեռնառու պայմաններով առաջարկվում են զանազան ապրանքներ: Յեվ թվում ե, շատ լավ ե մեծ քանակությամբ ու ձեռնառու այդ գնումները կատարել: Բայց այսպիսի դեպքում յերկար ժամանակով պայմանագիր կապելը շատ վտանգավոր քան է: Լավ ե ապրանքները գնել շուտ-շուտ և փոքր չափով, շուտ վաճառելու հույսով, քան թե կոռպերատիվի բոլոր միջոցները գնել մի ապրանքի մեջ, վորը դանդաղ ու գժվար ե ծախվելու: Պարտքերը ժամանակին տալու մասին կոռպերատիվ

վարչությունը պիտի շարունակ հոգ տանի: Դրանով կոռուկերատիվի անունը և վարկունակությունը բարձրանում ե, նրան շիտակ ու աղնիվ առևտրական են համարում: Իսկ մեր խորհրդային յերկրի առևտրական՝ կոռպերատիվի համար դա շատ կարևոր է: Հին կոռպերատորները գործը լավ եյին տանում—և նրանց կապիտալը տարեկան 10-15 անգամ շրջում եր, այժմ մենք 6-8 անգամ ենք պտտեցնում մեր կապիտալը: Մասնավոր խանութպաննը ավելի շատ անգամ և շրջանառության մեջ դնում յուր հիմնական կապիտալը: Դրա համար ե, վոր պիտք ե ծանր ու մեծ գնումներ չանել, այլ աշխատել փորք միջոցներով մեծ գործ անել:

Կարելի յե ի հարկե մեծ քանակությամբ տպրանքներ վերցնել սպառելու, ծախելու, համար, սակայն վոչ կանխիկ փողով, այլ ինչպես ասվում ե, կօմիսիայով: Որինակ, մի վորես պիտական պահեստից կամ կոռպերատիվ միությունից մեծ քանակությամբ տպրանք և վերցնվում, ինչքան ծախվում ե, փողը արփում ե ապրանքատիրոջը:

Շատ տեղ այս տեսակ առևտուրը լավ հետեւանքներ և ավել կոռպերացիային. պիտի ամեն տեղ փորձել: Մասնավանդ այդ հարկավոր և այնտեղ, վորտեղ տարվա վորոշ յեղանակին մեծաքանակ գնումներ են կատարվում:

## V. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄԸ ՎՈՐՏՏԵԼ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱ- ՏՐԵԼ

Ապրանքները պիտք ե գնել այն միության մեջ, վորին կոռպերատիվն անդամագրված ե: Միությունը—դա սպառողական ընկերությունների կենտրոնն ե:

Միությունից հարկավոր զեպքում կարելի յե ստանալ նաև խորհություններ, այնուհե վոչ մի խարհքայություն չի կարող լինել: Միության նպատակն ե ապրանքներ գնել մեծ քանակությամբ և առաջին ձեռքերից: Միությունը այդ ապրանքները կոռպերատիվներին ծախում ե շատ չնչին վերապիրներով: Միության միջոցով կամ նրա հետ միասին գնած ապրանքները միջն ափելի եժան են լինում ու հատկությամբ լավ: Հենց զրայնամար ե, վոր սպառողական ընկերությունները միշտ ձգտել են ունենալ իրենց միությունները:

Թաճորությունը աստանի կոռպերատիվների միությունը չայկոսում է:



Բայց կարող ե պատահել, վոր միության պահեստում կոռպերատիվին հարկավոր ապրանքը չկամ զներն ավելի բարձը են: Այս դեպքում նույն ապրանքը պետք ե վիճակի ուրիշ տեղ, պիտական առևտրական հիմնարկություններում, պիտական սինդիկատներում կամ, յեթէ գրքարանը մոտ ե, գրքարաններում: Այսպիսի առևտրական կապ առնեն մի կոռպերատիվ կարող ե ունենալ առանց վորեն թույլավության: Միայն պիտի աշխատել, վոր պիտական առևտրական հիմնարկությունները կոռպերատիվներին ապրանք բաց թողնելին մի քիչ ավելի եժան գնով և ապրանքային վարկը յերկար ժամանակով թույլատրելին, քանի մասնավոր խանութպանին: Մասնավոր ձեռքերից ապրանք առնելուց պիտի խույս տալ վորովհետեւ հենց զրանով կոռպերատիվը իր թշնամուն ու մրցակիցին մասնավոր կապիտալին—ուժ ե տալիս:

Ապրանքը ապառիկ առնելիս, պիտի ուշագրություն գարձընել պարտքը վճարելու ժամկետներին (սրոկին): Ընկերությունը պիտի հատուկ գիրք ունենա, վորի մեջ զրված ե թե նա ում, վորքին և յօրք ե պարտավոր վճարումներ անել: Այսպիսի գործերի մեջ մոռացությունը կամ անզգուշությունը յերեք թույլատրելի չեն: Ժամանակին չտալ պարտքը դա նշանակում ե սպառողական ընկերությունը դնել շատ վտանգավոր զբության մեջ, նրան մեծ հարված հասցնել: Ճշտապահությունը պիտի չմոռացվի, մանավանդ մուրհակային պարտքերի վերաբերմամբ: Մի անգում՝ անձշտապահ լինելը—տարիներով կոռպերատիվի անունը կոտրում ու նրան վարկ տալուն հետագայում շատ ե խանդարում:

Ապրանքների գնումների ժամանակ այնպիս պիտի անել, վոր վերադիր ծախքերը լինեն շատ փոքր: Ավելի լավ կլինի, յեթե պատվերները այնպիս պայմանավորվեն, վոր կոռպերատիվը ապրանքներն ստանա յերկաթուղով, (ի հարկե վորտեղ այդ հարմարությունը կա): Պատվերների այս ձեռվ կատարելը շատ եժան ե նստում կոռպերատիվներին ու քչացնում ե վերադիր ծախքերը: Միայն այսպիսի դեպքերում պիտի շատ ուշագիր լինել, հետեւ փաստաթղթելին, ապրանքը կայարան հասնելուց իսկույն գուրս գրել վոր յերկաթուղում ավելի ծախսեր չվճարվին ապրանքը պահպանելու համար: Մասնավանդ ուշագրություն պիտի դարձնել ապրանքի քաշին, քանակին ու վորակին: Յեթե ապրանքը պահպան ե, փչացել ե, պետք ե տեղն ու տեղը յերկաթուղային արձանագրություն կազմել տալ: Այդ արձանագրության հիման վրա՝ հետագայում կարելի յերկաթուղուց կամ ապրանք ուղարկողից վնասները պահպանվել:

Ապրանքը կոռպերատիվին հասնելուն պիս՝ պիտի տեսակների բաժանել, գարակների վրան սարքել և ստացված հաշիվներով ստուգել. վատ ապրանքների վերաբերմամբ առանձին ցուցակ պետք է կազմել, վոր հետո ապրանքները ուղարկող հիմնարկությանը տեղեկացվի ու կոռպերատիվի վասները պահանջվեն:

## VI ԱՌՄ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՇԱԽԵԼ

Ստացված ապրանքները տեսակների բաժանելու և ստուգելու հետ միաժամանակ, կատարվում ե ապրանքների գնահատումը, այսինքն այն գների վորոշումը, վորոնցով ծախվելու յեն ապրանքները: Այս գեպօրում չպիտի մոռանալ, վոր այժմ, յերբ անց և կացնվում փողային բարենորոգումը (թղթի փողից մենք անցնում ենք չերպոնեցների), խիստ կոխվ ենք մզում թանգության գեմ, ապրանքների գները պիտի լինեն մասնավոր խանութների միջին-դուկային գներից: մի քիչ ավելի եժան: Եժան գներով վաճառքը միանգամից կոռպերատիվի ոգտին և խոսում և ի վնաս մասնավոր խանութպանի:

Այս հիման վրա յերեք ապրանքներին բարձր գներ չպետք է նշանակել: Կոռպերատիվիայի նպատակն ե վոչ թե աշխատանքը, վաստակը, այլ սպառողներին ձեռնուու գներով ապրանք մատակարարելը, վորի հետևանքում սպառողը մի քանի կոպեկ տնտեսում է, հետ և զցում: Հենց վրա համար ե, վոր մենք վերեւուց ցույց տվինք, թե ինչքան անհրաժեշտ ե, վոր կոռպերատիվը պետական հիմնարկություններին այս կամ այն արտոնությունը տա: Այս կերպ միայն կոռպերատիվը կկարողանա ապրանքների գները վորոշ աստիճանի վրա պահել:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, հենց վոր մասնավոր խանութպանը իմացավ կոռպերատիվի գները, նա ևս ստիպված պիտի լինի յուր ապրանքների գները ցածրացնել, հակառակ գեպօրում նրա մոտ վոչ մի գնորդ չի գնա: Այսպիսի յերկույթ հենց հիմա շատ տեղերում նկատվում է: Հաճախ ե սպատառում, վոր կոռպերատիվում մի վարևե ապրանք քչանալուց կամ վերջանալուց, խանութպանը իսկույն այգպիսի ապրանքի գինը բարձրացնում է և սկսում է թալանել աշխատավորի վերջին կողեկը: Հենց այդ պատճառով կոռպերատիվի վարչությունը պիտի խիստ հետևի շուկայի գներին, ապրանքների պահանջին և դրա համապատասխան փոփոխի յուր խանութի գները: Միայն թե այդ բոլորը իր ժամանակին պիտի անպատճառ անց կացնել հաշվապեհական գրքերով:

Ապրանքի գնահատման ու ծախելու ժամանակ չպիտի մռանալ ելի մի կանոն, վոր այժմ խիստ կերպով պահանջում ե մեր կառավարությունը—դա ապրանքների ծախուզները հայտարարեն եւ Ամեն մի գնորդ խանութիւններուց պիտի տեսնի այդ գները: Բացի այդ՝ լավ կը լինի խանութում կախել հատուկ մի ցուցակ, վորի մեջ ցույց տփած լինեն թե կոոպերատիվում ինչ ապրանքներ կան և ինչ գներով են ծախում: Ամեն մեկը այդ կտեսնի ու կհամոզվի, վոր կոոպերատիվում գործը աղմվությամբ և տարվում՝ լավ կմտածի ու հետո միայն ապրանք կտոնի: Սա մի շատ կարեոր հանգամանք ե, վոր պետք է յերբեք մոռացության չտալ:

Սպառողական խանութը պիտի զլիւավորապես յուր անդամների մասին մտածի ու նրանց կարիքներին ծառայի: Ամեն մեկին ապրանք ծախելուց պիտի խույս տալ: Շատ անդամներցնում են, թե ինչպես վարկել նրանց հետ, վորոնք կոոպերատիվին անդամ չեն. կարելի՞ յէ արդյոք, վոր կոոպերատիվը յուր անդամներին ապրանք ծախի ցածր գներով, իսկ կողմանի անձանց ավելի բարձր գներով: Այս հարցին մենք կարճ կը պատասխանենք.—այս, կարելի՞ յէ:

Ի հարկե, փայտավճարը մեծ գումար չե, բայց ամեն վոքչի կարողանում այն մացնել: Այս գեղքում պիտի կանոն գնել, վոր անդամին ու կողմանակիներին ծախվող ապրանքների գների տարբերությունը կամաց կամաց չքավորների փայտերի հաշվին գրվի: Այս կերպ մենք չըքավորներին ևս հնարավորություն կտանք կոոպերատիվին անդամագրվելու:

Կոոպերատիվի անդամներին վոչ միայն գների տարբերությունը պիտի ապրանք ծախել, ալլ և վարչությունը անդամներին ուրիշ արտոնություններ կարող ե տալ. կարող ե ապրանքները ծախել կոոպերատիվի անդամներին հերթից գուրս, վորոշ ապրանքներ միայն անդամներին կարելի յէ ծախել: Ուրիշ խոսքով ասում՝ ամեն վոք պիտի զգա, վոր կոոպերատիվին անդամ լինելը շատ ձեռնառու յէ:

## VII. ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ԳՆՈՐԴՆԵՐԻՆ

Շատ են խոսում, վոր կոոպերատիվում գնորդների հետ վատ են վերաբերվում: «Այս, մի համեմատեցեք մասնավոր խանութը և կոոպերատիվը»— լսում ես համարյա ամեն որ: Մասնավոր խանութում գնորդի հետ վարչել գիտեն, քաղաքավարի և ուշողիր են, հայհոյանք չկա: Իսկ սպառողական խանութում

(ի հարկե վոչ բոլոր) վերաբերմունքը պաշտոնական ե, կարծեա, չինովնիկաւկան, մանավանդ դեպի չքավուները. չի նկատվում, վոր գեպի կոռպերացիան նոր—նոր համակրողներ քաշելու շահագրգովածություն կա: Դրա համեանքնայն ելինում, վոր շատ հաճախ կոռպերատիվի կողքից անցնում են, բայց այնուել չեն մտնում: Մասնավոր չարչեն խարում ե թե կշեռքում, թե չափի մեջ, բայց վարվեցողություն ունի. ի հարկե, այդ բանը գնորդին շատ թանգ ե նսուում, բայց գնորդը նրա մոտ ե գնում—քազը խոսքը ամեն ինչից թանգ արժե: Հենց այդ պատճառով ել ծառայող հրավիրելիս պիտի շատ ուշադիր լինել, թե կոռպերատիվի ծառայողը ինչպիսին ել լինելու:

Ծառայող հրավիրելիս պիտի պայման կարել, վորի մեջ տոված ե նաև քաղաքավարի ու լավ վերաբերմունքի մասին: Բացի այդ, յուրաքանչյուր ծառայող պարտավոր ե նոր գնորդներ ու անդամներ զբավել կոռպերատիվի համար: Յեթե այս պայմանները չեն կատարվում, պայմանագիրը խախտվում ե և հրավիրվում ե նոր ծառայող: Յեթե ծառայողների թիվը շատ ե, կապվում ե հավաքական (խմբական) պայմանագիրը: Լավ ե, յեթե այս գործին մասնակցի արհեստակցական միությունը:

Ծառայողներին դաստիարակելը մեծ բան է: Կոռպերատիվի լույս ծառայողը գործի հոգին ե: Նրանից ե կախված գործի լավանալը, լավ ծառայողի անունը կոռպերատիվի անունը բարձրացնում ե, վաս ծառայողին ընդհակառակը: Շատ պետք ե զգութինել հին առեւլականներին ծառայության կանչելիս: Հարցուր այսպիսի ծառայողներից՝ իննառուն հինգը վաս են գործուալիս: Կամ այսպիսիններին պիտի խիստ հետեւել կամ բոլորովին չպետք ե հրավիրել: Շատ ե պատճենել, վոր այսպիսի մեկը մի տարի կոռպերատիվում ծառայելուց հետո իր խանութն ե բաց անում: Ամելի լավ ե այսպիսի մասնագետի տեղ հրավիրել տեղացի մի ազնիվ բանվորի կամ գյուղացու: Գործին նա կհարմարվի, կսովորի, բայց վերջում շատ ողտակար կլինի: Այսպիսի ծառայողը կոռպերատիվի շահերին հավատարիմ կծառայի:

Յեթե վերեւում բերված բոլոր խորհուրդները կատարվեն, կոռպերատիվը անկասկած առաջ կգնա: Յետո ամեն ինչ ինքնիբան լույս կգնա: Կոռպերատիվը յուր գործերում չպիտի մոռանա յուր յերկու գլխավոր հավատակները: Առաջինը՝ յուր շըրշանի բոլոր բանվորներին ու գյուղացիներին համախմբել կոռպերատիվի շուրջը, և յերկորդ անխնա կորիվ մզել մասնավոր առերի հետ, մինչեւ նրա վերջնական վոյնչանալը: Կոռպերացիան-

պիտի բոլոր առետուը յուր ձեռքն առնի: Այժմ, յերբ զնդան փող  
ունենք և թանգությոն դեմ կովելու անհետաձգելի պահանջ՝ այդ  
յերկու նպատակները պիտի իրականացնվեն և ամեն միջոց պի-  
տի գրա համար գործադրի՛: Ի հարկե, այս բոլորը կոռպերա-  
ցիան մենակ չե անելու: Պիտք ե գործին մասնակցեն զյուղա-  
կան խորհուրդները, կոմքջիջները և պրոֆմիությունները: Այս-  
պես համախմբված, միացած կովելը ավելի հեշտ և և հաղթանակը  
ավելի ապահովված: Մանավանդ այդ կովին գիտակից մասնակ-  
ցություն պիտք ե ունենան կոռպերատիվի անդամները: Յեթե  
վերջիններս միաբանվեն և մասնավոր խանութպանից ապրանք  
չառնեն—գործն ինքնին արդեն վերջացած ե և կոռպերացիան  
հաղթող է: Բոլորը կոռպերատիվի զնորդներ կդառնան շատ  
կարճ ժամանակում:

### VIII. ԳՅՈՒՂԵՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻՎԱԶԱՐՔՆ Ի՞՞Զ- ՊԵՍ ԿՅՉՄԱԿԵՐՊԵԼ\*)

Մենք պիտենք, վոր սպառողական ընկերությունը բացի  
յուր անդամներին զանազան ապրանքներ մատակարարելուց՝  
զբաղվում ենակ այլ, յուր անդամների տնտեսության համար շատ  
կարեոր, աշխատանքներով: Այդ աշխատանքներից ամենակարե-  
գորն է զյուղի աշխատավորության արտադրած զանազան մթերք-  
ների (բամբակի, խաղողի, յուղի, պանրի, ձվերի և այլն) զը-  
նումը:

Ամենքին հայտնի յե, վոր զյուղացին յուր մթերքները պա-  
տահաքար ծախելով, շատ հաճախ ընկնելու յե քաղաքի վաճառա-  
կանի ձեռքը, և միշտ ստիպված ե եթան զներ ստանալ յուր ար-  
տադրած մթերքների համար: Ամեն տարի մեր զյուղացիությունը  
տասնյակ հազարներ ե կորցնում յուր անկազմակերպ լինելու  
պատճառով և քանի այդ զրությունը շարունակվի՝ մեր զյուղա-  
ցու աշխատանքի մեծ մասը վայելելու յեն մասնավոր վաճառա-  
կանն ու չարչին:

Ինչպես վերջ տալ և մեկ կարող ե վերջ տալ այս յերեսութիւն:  
Անշուշտ կոռպերատիվ ընկերությունները:

Դրա համար կոռպերատիվի վարչությունը հատուկ վորոշու-  
մով պայման ե կապում կոռպերատիվ միության կենտրոնի կամ

\*) Բնագրի մեջ միայն գյուղացու արտադրած հացամթերք-  
ների մասին ե խոսված: Մենք կարեոր համարեցինք այս գը-  
ությունը հարմարեցնել Հայուսունի տնտեսական կյանքին և ինք-  
նություն խմբագրել:

վորեե բանկի կամ վորեե պետական որգանի հետ՝ նրա համար գյուղական այս կամ այն մթերքի այս կամ այն քանակությունը պատրաստելու հալատակով։ Պայմանի մեջ պիտի նախատեսնել բոլոր հանգումանքները, վորոշել պատրաստվելիք ապրանքի գինը պատրաստելու և մատակարարման ժամանակը և այն, ի հաշիվ այդ ուայմանազրով պատրաստվելիք ապրունքի արժեքից պատվիրողը մացնում է կոռպերատիվի գանձարկղը մի վորոշ դումար, վորը կոռպերատիվի վարչությունը յուր հերթին բաժանում է գյուղացիներին։ Վերջիններս ասահճանաբար, ուայմանազրով նախատեսնված ժամանակում, կոռպերատիվին են հանձնում իրանց պատրաստած մթերքները։ Վերջնական հաշիվը կոռպերատիվի հետ ամեն մի գյուղացի վերջացնում է, հենց վոր կոռպերատիվը լրիվ կատարում է պայմանազրի համաձայն յուր ընդունած պատվերը։

Այսպիսով գյուղացին մի կողմից ազատվում է յուր մթերքները եժան ծախելու մշտական յերեսութից, մյուս կողմից նաոնքում է կոռպերատիվի ամրանալուն։ Մասնավոր չարչին ու վաճառականն ել կազմակերպված և կոռպերացած գյուղացուն ընականաբար այլ ևս գաղտնում են մոտենալուց։

Ի հարկե, բացի այս գյուղացի արագորդները իրենց շահերը կարող են շատ ձեւերով պաշտպանել մասնավոր չարչիներից և վաճառականներից։ Բայց այստեղ կանգ տռնել մանրամասնությունների վրա մենք կարեոր չենք համարում։ Պիտի միայն մի բան հիշել, վոր կոռպերատիվը ընկերությունը կարող է յուր անդամներին ազատել բոլոր տիսակի միջնորդներից ու շահագործողներից։ Դըա համար շատ միջոցներ կան և հարկավոր դեպքում առեն մի կոռպերատիվ պիտի գիմի իր կոռպերատիվը միության հրահանգչին և նրա խորհուրդը հարցնի, նրա աջակցությունը ստանա։

## IX. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳՆՈՒՄԸ ՑԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԳԻԱՀԱՎ ՑԱՌ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱԶԱՆԿԵՐ- ՊՈՐՄԸ

Ներկայումս գյուղացու համար մենակ իր ույժերովը գյուղատնտեսական գործիքներ (գեռ չենք ասում մեծ-միծ մեքենաներ) գնելը շատ գժվար է։ Շուկայում, ենց որինակ չայտստանում, դրանց թիվը շատ քիչ է։

Այս ծանր գրությունից յուր անդամներին դուրս բերելու համար, կոռպերատիվը հիմում է այսպես կոչված «գործիքներ»

քրահով տվող կայաններ», վորտեղ ամէն տեսակի գյուղատընտեսական գործիքներ և մեքենաներ կան: Գյուղացին կարող եւ տմինաքիչ վարձով իրեն հարկավոր գործիքը կամ մեքենան այդտեղ ստանալ ժամանակավոր ոգտագործման համար: Գործի կազմակերպումը շատ հասարակ է: Պիտի կոռպերատիվի շրջանում պահանջվող և շատերին կարեուր գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ ձեռք բերել և այդ բոլորը հավաքել մի տեղ: Յեվ ապա՝ կոռպերատիվի վարչության մի անդամը հերթով գյուղացիներին բաց եւ թողնում նրանց հարկավոր գործիքը կամ մեքենան: Որինակ՝ այսոր մի գյուղացու հարկավոր և արոր, մյուսին գութան, յերբորդին հնձող մեքենա և այլն: Հերթով նրանք ստանում են և ձեռքից ձեռք տալիս:

Գյուղերում այսպիսի կայանները շատ մեծ դեր են խաղում: Չունեսոր գյուղացիներին նրանք շատ մեծ ոգնություն են ցույց տալիս: Այդ գործն ուրիշ կերպ ել կարելի յեւ կազմակերպել: Կոռպերատիվի անդամների մի խումբ կազմակերպում են հատուկ մեքենաների գնման հանձնաժողով «կամ սեկցիա»: Դուռըն մեքենաները քրեհով տվող կայանն եւ միայն ավելի փոքր չափով:

Ասենք թե հավաքվում են 10—15 գյուղացիներ, ընդհանուրի համար մեքենաներ գնելու նպատակով: Նրանք կազմակերպում են սպառկոռպերատիվի բաժանմունքը կամ առանձին «սեկցիան» (հանձնաժողովը): Հաշվում են, թե ինչ տնտեսություն ունեն, ի՞նչքան հող, ի՞նչ գյուղատնտեսական գործիքներ են հարկավոր իրենց: Վորքան կարենոր եւ այնքան ել զնում են: Մեքենաներից ոգտվում են նույն հիմունքներով, ինչպես վորքերն հեշված կայաններից: Ի հարկե առաջին հերթին ոգտվում են այդ կոռպերատիվի կամ խմբավի անդամները:

Այսպիսի խմբավարումները հնարավորություն են տալիս իրենց միջոցներով ձեռք բերելու անհրաժեշտ մեքենաների ամեն տեսակները: Մի տնտեսության համար այդ ամենը ուժից վեր կլիներ: Գործի ձեռնուու լինելն այնքան պարզ ե, վոր հարկադրություն չկամ մանրամասն ապացույցների:

Այսպիսի կայանների կազմակերպումը շատ հաճախ մի այլ ռողուստ ել ե տալիս—դա համայնական վար ու ցանքսերի կազմակերպումն ե: Մեքենաների և գործիքների քրեհով տվող կայաններում շատ հաճախ անկարելի յեւ լինում խուսափել յերկար հերթի սպասելուց:

Այսպիսի գեպքուստ հասարակական (խմբական) վար ու ցանքսի յեն դիմում: Այս մասին մի պարզ որինակ բերենք: Յենթաղը-

րենք, թե մի քսան գյուղացի համախմբվել են: Նրանք բոլորը միասին (կոչ ջոկ-ջոկ) ունեն ձիեր, գութաններ, արորներ, ցանող մեքենաներ և 20 տուններ և 20 տուններ: Այսոր այդ հողամասներից մեկը սկսում են վարել մի գույդ ձիով: Մի հողամասը վերջացնելուց՝ աշխատանքը սկսվում է նույն յերկրորդ, յերրորդ և այլ հողամասերում: Այս կերպ քիչ աշխատազ անտառներով և գործիքներով հարավոր և գամում բոլոր հողաբաժինների վար ու ցանքսը վերջացնել: Պարզ է, թե ինչքան ձեռնառ յեայս կերպ աշխատանքը վարելու:

Իսկ ինչ կլիներ, յեթե այդպես չվարվելին: Մեկը գութան ունի, մյուսը ձի, յերրորդը արոր, չորրորդը ցանող մեքենա: Ամեն մեկը տանիններ յուր վար ու ցանքսից կամ պիտի հրաժարվել կամ յերկար սպասի, թե յերը հարեվանի քեֆը կփա և նա կարող կլինի հարեանի գործիքներից կամ անասուններից ոդովկել:

Մենք հասարակական վար ու ցանքի ամենուհասուրակ ձեվերի մասին խոսեցինք: Ամեն ինչ կախված է պայմանից և համաձայնությունից: Կարելի յէ ամբողջ տնտեսությունը տանել ընդհանուր ուժերով, մի քանի տեղ այսպիս ել անում են: Չեռք ին բերել տրակտորներ, վորոնցով ամբողջ տարի աշխատանքը սիրանքամից բոլորի համար է կատարվում: Արտասահմանում շատ տեղերի գյուղացիներ վաղուց են վարելու այդ նոր ու լավ ձեվերին անցել: Ծնորհիվ զբան, նրանք ավելի հաջող հունձ են հավաքում, թեև ավելի քիչ են աշխատանք թափում իրենց զործի վրան: Հայ գյուղացին ել, ժամանակ և, վոր մտածի, թե արգեն ժամանակը հասել է, յերբ ինքն ել այդ կերպ պետք է տանի իր տնտեսությունը:

## X. ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԹԵՅԱՏՆԵՐ ՅԵՎ ՀԱՇՎՐԱՆՆԵՐ

Խոսելով կոռպերացիայի մասին՝ յերեք չի կարելի նրա մի-  
այլ աշխատանքի մասին մոռանալ: Գյուղում ու քաղաքում բաց-  
վել են թիյատրներ ու ճաշարաններ, վորոնք մեծ մասամբ մաս-  
նավոր մարդկանց են պատկանում: Կոռպերացիան առաջ ել-  
այժմ ել ձգուել և այդպիսի թիյատրներ ու ճաշարաններ բանա-  
կրեն կից: Այդ գործին այժմ շատ մեծ զարկ պիտի տալ մանա-  
վանդ բանվորական շրջաններում:

Ի՞նչ առավելություն ունին հասարակական ճաշարաններ, թիյատրում մասնավորի, տնայինի համեմատությամբ: Մի քանի  
խոսքով այդ առավելությունները բոլորովին հասկանալի կլառ-

նան. վերցնենք որինակ մի գյուղ կամ բանվորական շրջան 100 տնտեսությունից բաղկացած։ Ամեն որ հայրուք վառարան եւ վառվում, հարյուր կապոց փայտ պիտի այրվի, հարյուր կաթսա կրակին պիտի դրվի և հարյուր, գուցե և ավելի, հոգի տարվա մեծ մասը այդ գործով պիտի զբաղված լինեն։ Իսկ այդ բոլորի հետեանքում գոնե համեղ ճաշ և ստացվում։ Պոչ միշտ՝ Ամեն տանտիրուհի համեղ ճաշ պատրաստել չգիտե։ Իսկ յեթե մի ընդհանուր ճաշարան բաց անհլու լինենք, միթե այդքան ծախքեր կլինեն, այդքան յեռնող կմսխվի, այդքան փայտ կվառվի։ Ամենազլխավորն ինչքան աշխատավոր ձեռքեր կադատվեն. իսկ այդ աշխատավոր ձեռքերը մանավանդ վար ու ցանքսի, հունձի ժամանակ ինչքան են հարկավոր։ Իսկ բանվորի ընտանիքում։ Բանվորի կինը վոչ միայն աշխատանք ունի։ Նա առավոտյան վաղ պիտի վեր կհնա, վոր կերակուր յեփի։ Յեղ ինչքան չարչարանք ու ծանր աշխատանք ունի յեփելը։ Միթե հենց այդ աշխատանքի շատությունից, հենց այդ մշտական դրադ ված լինելուց չե, վոր շատ հաճախ ընտանիքում անհամաձայնություններ ու վեճեր են լինում։ Ինչքան դժգոհություններ, մեղադրանք։ Իսկ բանվորի ծանր աշխատանքի որերին ինչքան ե հարկավոր լավ կերակուրը։ Մի վոնե արմտիք, կտրատած սոխ, գազար—այդ մանր բաները կերակրի համեղությունն ել են ավելացնում, նրա տնտեսությունն ել. իսկ միթե ամեն մի զբաղված տան, յերբ նրա անդամները հազար ու մի գործ ունեն, այդ բոլորին կարողանում են ուշք գարձնել։ Վոչ։ Յեղ յերբ այս բոլորը մտածում ես, այս բոլորն ի նկատի յես առնում, տեսնում ես, վոր հասարակական ճաշարանը շատ հարմար ու ոպտակար։

Սպառկոռպերացիան այս մասին պիտի լուրջ մտածի և գործի անցնի եւ։

Գործը շատ մեծ գործ եւ և ոգտակար։ Մասնավոր առետրականներն այդ գործի մեջ շատ մեծ փողեր են աշխատում։ Որինակ Մոսկվայում անցյալ կիսամյակում 800 մեծ, (իսկ մանրներով մինչև 3000) սննդառու հիմնարկություններ են բացվել։ Իսկ ուրիշ քաղաքներում միթե քիչ կան գրանից։ Իսկ յերբ մտնում ես այստեղ՝ ինչ ես տեսնում։

Մեծ բեստորանում բանվորը կամ գյուղացին վոտք գնել չեն կարող։ Այստեղ ամեն ինչ շատ թանգ ե, իսկ փոքրիկ «խարչնելկան» այնքան և կեղառոտ, վոր մարդու «սիրաը թափվում ե» տեսածից ու կերածից։ Ամենազլխավորն—այստեղ մեղ կերակրում են ամենաանպետք բաներով, միայն թե «փորդ լցնես» ու

«կշտանաս», իսկ ծանր քրտինքով աշխատած փողերը գնում են Մի քանի ժամից ելի ես քաղցոծ ու ելի ես անիծյալ կյանքիդ վրան չարանում:

Սպառողական կոռպերացիան նպատակ ունի տռանձին-առանձին սպառողին իր շահագործողներից ազատել: Այդ կոիփէ պիտի իր ամենամեծ չափուն առնի: Բանվորի ու գյուղացու համար շատ գժվար և յուր հաշվին կերակրել այն հազարավոր ճաշաբանատերերին ու «չայչի ու խարչեվկա» պահողներին, վորոնք նրա հաշվին ապրում ու հարստանում են: Յեվ ի հարկե կոռպերացիայի գործն ե՝ բանվորին ու գյուղացուն այս գործում ողնության գալը: Կոռպերացիան ավելի եժան, ավելի լավ ուտելու մթերքներ ձեռք կրերի և ամելի լավ ճաշաբաններ կարող ե կազմակերպել Կոռպերացիան, վոր բանվորների և զյուղացիների կազմակերպությունն ե, նրանից դուրս յեկած, պիտի մտածի այդ հազարավոր աշխատավորների համար հարմարություն ու մաքուր ճաշաբաններ ստեղծելու մասին:

Պիտի միանգամից ձեռք քաշել հին ճաշաբաններից ու ու թեյատանիրից, նրանց սարգ ու կարգից, վաս սննդից, վորը բաշխվում ե յերկար հերթեր պահելուց հետո: Պիտի ստեղծել իսկական հասարակական ճաշաբան—թեյատուն, լուսավոր ու լայնարձակ, հարմար հանգստանալու համար՝ լրագիրներով ու գրքերով: Այդ ճաշաբանն, այդ թեյատուն արժանի յե, վոր բանվորն ու գյուղացին ունենան իրենց ծանր աշխատանքից հետո: Այդ գործի համար միջոցներ ել չպիտի ինայինք քանի վոր գործը իր ծախքերը կծածկի և միաժամանակ մեծ ոգուած կտա:

Կոռպերատիվ ճաշաբանն ու թեյաբանը պիտի հասարակական սկզբունքերի քարոզող դասնան: Այնտեղ ուտել խմելու համար պիտի շուկայի գներից մի քիչ ցածը գներ առնվեն: Այնտեղ պիտի ի նկատի առնվեն հաճախորդների հոգեկան պահանջների քավարարելը: Ճաշաբանի ու թեյատան յեկամուանները պիտի հատկացնվեն գործի լայնացնելուն ու մեծացնելուն:

Սովորաբար կոռպերատիվ ճաշաբանը կամ թեյատունը բանում ե սպառողական ընկերությունը: Դրա համար առանձին թույլտվություն հարկավոր չե: Բավկական ե, վոր կոռպերատիվի անդամներն այդ ցանկանան:

Գործը կազմակերպելիս՝ պիտի նախաճաշիվ ունենալ, ի՞նչ ծախիքեր են նախախենոնվում, ի՞նչ աղբյուրներից պիտի ե այդ ծախքերը ծածկել, հարկավոր ե մի լավ, բարեխիդք մարդ գտնել, վորը կարողանա վորոշ սաճիկով այդ գործը դեկալարել: Նրան պիտի

ցույց տալ գործի վարելու յեղանակը, հրահանդներ տալ, թե հաշիվներն ինչպես պիտի պահվեն, հարկավոր մթերքներն ի՞նչ տեղից գնել, ի՞նչպես սպառել, հարկավոր և այդ կառավարչի գործերի խիստ հաշվեառի ու վերահսկողության մասին ել մտածել ու ներքին կարգ ու սարգ հաստատել:

Կառավարչի, մթերապահի և այլ նման ծառայողների պարտականությունները և նրանց հաշվետվության ձեզ հենց սկզբից պիտի պարզ ու վորոշ լինեն, վոր հետագայում վոչ մի թյուրի մացություն չլինի: Լավ հաշվապահությունը—գործի հաջողության առաջին պայմանն ե: Մի որ այդ հարցի վրան ավելի աշխատելը—ապագայի տարիների լավ գործունեյությունն և ապահովում:

Ծառ մեծ աշխատանք պիտի թափել լավ ծառայողների ընարության գործին: Կոռպերատիվ ձեռնարկի ծառայողն ամենից առաջ պիտի մաքրասեր լինի, գիտակից, հաճախորդների հետ քաղաքավարի, ուշազիր ու հոգատար՝ թե ճաշարան-թեյատնում ինչպիսի կարգեր գոյություն ունեն: Ի հարկե այդպիսի ծառայողի աշխատանքն ել պիտի լավ վարձատրել: Ավելի լավ և մի քիչ կարգին ոռօնիկ տալ, քան թե ստիպել նրան հաճախորդներից «նա չայ» առնել մի քան, վոր այնքան ստորացնում և թե տվաղին, թե ստացողին: Ճաշարան-թեյատանը պիտի անպատճառ ստեղծել ընկերական ու բարեկամական միջավայր:

Ճաշարան-թեյատունը պիտի տեղավորված լինի մաքուր, լայն ու լուսավոր տեղ: Ողջ շատ պիտի լինի այնտեղ: Սթոռն ու սեղանը, հատակն ու պատերը միշտ մաքուր լվացած: Կոռպերատիվ ճաշարան-թեյատան հաջողության յերկորդ պայմանը—լավ, միշտ մաքուր լվացած ամանեղենն ե: Ավելի լավ ե, վոր այդ ամանեղենը Փարֆորից (հախճապակի): լինի, քան սովորական ապակուց, վոր շուտ և կոտրատվում: Սեղանների վրան պիտի միշտ լինեն ամանեղենը լվանալու անոթներ, այլև մոխրամաններ: Հաճախորդներն անպատճառ պիտի այդ բոլորին սովորեն: Լավ կըլինի, յեթե ողափոխություն ել սարգված լինի (վիճակից յիտ):

Բացի մաքուրթյունից՝ ճաշարան-թեյատունը պիտի ունենա նաև գուրեկան տեսք: Պատերին պիտի կախված լինեն հեղափոխության մեծ գործիչների նկարներ: Զպիտի կախել փողոցային նկարներ: Լավ կլինի, յեթե պատերին ունենանք մեր հանրապետության քարտեզը, նույնպես ձեր գովառինն ու գավառամասինը: Այդ բոլորը պատճառ կդառնան, վոր ձեր ճաշարան-թեյատանը զրոյցներ լինեն ընդհանուր անտեսության


մասին: Պարտադիր ե, վոր դուք ունենաք նաև զյուղատնտեսական ու կոռպերատիվ բովանդակությամբ պատկերներ: Այդ պատկերներիցն ե, վոր ընդհանուր խոսք ու զըռւցց և սկսվում ձաշի և թեյլ ժամանակ: Լավ կլինի, վոր զանազան հայտարարությունների, նորությունների ու կարիքների համար հատուկ տախտակ լինի: Խաղերից միայն կարելի յե թույլատրել «Հաշկի» ու «Հախմատ»: \*) Յեթե գրամոֆոն լինի, պիտի նրա յեղանակներն ու յերգերը ուշադրությամբ ջոկված լինեն: Ամեն ինչ, ինչ վոր հին կյանքն և հիշեցնում, բանվորին ու զյուղացուն ֆլամակար իր վոգովը չպիտի ընդունել կոռպերատիվի պատերի միջև:

Ճաշարան-թեյտունը պիտի անպատճառ մի քանի լրագիր ստանա իր հաճախորդների համար: Զպիտի մոռացվէն նաև կոռպերատիվ թերթը, կոռպերացիայի մասին հրատարակված գրքույները: Յերեկոները այդ լրագիրներն ու գրքույթները պիտի բարձր ձայնով կարդալ, իսկ զրա համար խմբակներ պիտի կազմակեալվին: Ահա թե ինչպես և սկսվում կոռպերատիվ ճաշարան-թեյտուն հասարակական կյանքը: Այս կերպ կազմակերպված նա մտավոր մնունդ ել և տալիս իր հաճախորդներին: Շատ զյուղերում ու քաղաքներում այսպիսի ճաշարան-թեյտոներ արդեն բացվել են. պիտի այդ գործին ավելի զարկ տալ, ել ավելի մեծացնել:

Վերջացնելով մեր այս խորհուրդները, մենք սպառողական կոռպերատիվների ղեկավարներին մի վերջին բան ել հնաք ուզում ասել — պիտի ուշք դարձնել կանոնավոր հաշվապահության վրա, պիտի շուտ-շուտ ինքնաքննություն կատարել, սեփական գործունեության ստուգում: Լավ հաշվապահությունը ամեն մի գործի հիմքն ե: Դրա համար հարկավոր ե, հենց վոր մի գժվարություն և լինում, ձեր միության հրահանգչին հրավիրեք և նրա ղեկավարությամբ, նրա հետ միասին թյուրիմացությունը պարզեք: Հրահանգչի ամեն մի գալուց չմոռանաք ձեր կոռպերատիվի գործերը մի թեթև քննության յենթարկել: Հրավիրեցնեք ձեր վերսուուգիչ հանձնաժողովը, նայեք թե ի՞նչն ե վատ, ի՞նչն ե լավ ձեր կոռպերատիվի գործերում: մտածեք, թե ինչ մի ջոցներով այդ պահասությունները կարելի յե վերացնել և ձեր կոռպերատիվի ամբողջ գործը առողջացնել ու լավ հիմքերի վրա

\*) Մեզ սոտ կարելի յե թույլատրել «Նարդի», վոր Թուաստանին ծանոթ չե:

գնել: Այդ բոլորը դուք չեք կտրող չանել: Վորովհետեւ մեր յերկ-  
րում կոռպիրացիայի վրա շատ մեծ պատասխանատվություն ե-  
քրված, շատ գործեր կան անելու: Յեզ ինչքան շուտ իրականաց-  
նենք մեր անելիքները, այնքան հեշտ ու դուրեկան կդառնար-  
բանվորի ու դյուզացու կյանքն ու ապրուստը:



Բանվորներ և գյուղացիներ՝ կարգացեք և  
տարածեցեք «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՌՊԵՐԱՑԻԱ»  
թերթը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0835533

Ա 377

Ա 93

306

ԳԻՆՆ Ե 2040764.

100-ից ԱՎԵԼԻ ԳԽՈՂԱՆԵՐԻՆ 10% ԶԵՂՋ.